«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝Սաների մեջ ինքնուրույնության նախաձեռնողակա նության, և ստեղծագործականությունների զարգացումը:

Դաստիարակ՝ Սոնա Սահակյան

«ՀՀ Լոռու մարզի Շնողի «Հեքիաթ»մանկապարտեզ»ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…….....…….. 3
ԳԼՈՒԽ 1. Ինքնուրույնությունը որպես աշխատանքային գործունեության արդյունք
1.1 Ինքնուրույնության ձևավորումը, հիմնական դրսևորումները նախադպրոցական տարիքային տարբեր փուլերում …… 4
1.2 Աշխատանքը, որպես նախադպրոցականի ինքնուրույնության դրսևորման ձև, տեսակները և կազմակերպման ձևերը ……..……..…… 7
ԳԼՈՒԽ 2. Աշխատանքային դաստիարակություն
2.1 Միջոցները և մեթոդները …….....…… 11
2.2 Ստեղծագործական ունակություններ…….....…… 13
2.3 Նախաձեռնողականության ձևավորում …….....……15
3. Պարապմունքի պլան…….....……..… 16
4. Դիտարկողների վերլուծություն…….....…… 20
Եզրակացություն…….....…….…… 21
Գրականության ցանկ…….....……..… 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժության պատմության մեջ գործում է Մոնթեսորիի մեթոդը:

Մեթոդի կարգախոսն է՝ օգնիր ինձ գործել ինքնուրույն:

Ինքնուրույնությունը մարդու կարևորագույն հատկանիշներից է, ինչի ձևավորումը սկսվում է վաղ տարիքում:

Երեխայի ինքնուրույնությունը արտահայտվում է նրա կյանքի բազմաթիվ ոլորտներում՝ ինքնասպասարկում, խաղեր, մշակութահիգիենիկ, հանրօգուտ գործունեություն, շրջապատի հետ շփումներ և այլն: Ինքնուրույնության ձևավորման մեջ մեծ դեր է հատկացվում երեխայի աշխատանքային գործողություններին: Աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունը, աշխատանքային հանձնա-րարություններ կատարելու պահանջմունքը ձևավորվում են մանկական ինքնուրույնության շրջանակներում: Աշխատանքը կարևոր գործունեություն է, որը կատարելագործում է երեխայի ունակություններն ու կարողությունները, զարգացնում դիտականությունը:

Ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որը պետք է ձևավորվի վաղ տարիքից: Նրա զարգացման համար կարևոր է ազատ և անկաշկանդ մտքի արտահայտումը: Ինքնուրույն և ստեղծագործ երեխան ինքն է նախաձեռնում, թե ինչպես իրականացնի իր մտածածը:

Նախաձեռնողականությունը այն ուժն է, որը նոր միտք է մղում դեպի կյանք:

Հետազոտական ածխատանքի իմ նպատակն է՝

1) Ուսումնասիրել աշխատանքի միջոցով երեխաների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործականության դրսևորումները:
2) Տեսական գիտելիքների կիրառման ժամանակ կարողությունների և հմտությունների ձեռքբերումը:

ԳԼՈՒԽ 1.

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

1.1 Ինքնուրույնության ձևավորումը, հիմնական դրսևորումները նախադպրոցական տարիքային տարբեր փուլերում

Ինքնուրույնություն– Ըստ Ս. Օժեգովի բառարանի ‹‹ինքնուրույն›› հասկացությունը ունի հետևյալ սահմանումները.

- Ազատ,անկախ
- Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն
- Մյուսներից առանձնացված
- Ինքնուրույն ուժերով կատարվող գործողություն՝ առանց օգնության և ուղղորդման
- Կողմնակի ազդեցությունից անկախ

Ըստ բառարանի՝ ինքնուրույնությունը սահմանվում՝ որպես ‹‹անձի առանցքային որակներից մեկը››, որն արտահայտվում է կարողության մեջ նպատակներ սահմանել և սեփական ուժերով հասնել իրականացմանը:Ինքնուրույնության ձգտումն ավելի բնորոշ է փոքրերին:

Նախադպրոցական շրջանում ձևավորվում են անձնային կարևոր հատկություններ, որոնք հնարավորություն են տալիս երեխային ինքնահաստատվելու կյանքում:

Նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման մեկնարկային շրջանն է, որի հաջողություններից է կախված կյանքի հաջորդ փուլերի առաջընթացը: Նախադպրոցական տարիքի հիմնական ձեռքբերումներն են.

- հիմնական շարժումներին տիրապետումը
- ինքնուրույն և գիտակցված աշխարհընկալումը
- հաղորդակցվելու և համագործակցելու ունակությունները
- սեփական վարքագիծը կարգավորելու և կառավարելու կարողությունները
- գերծողության և վարքագծի դրդապատճառները համակցելու կարողությունները

- ինքնուրույն որոշումներ կայացնելու և կողմնորոշվելու ունակությունները

Վաղ տարիքի կարևոր ձեռքբերումը խոսքային հաղորդակցումն է, որն արդյունք է խոսքի տիրապետման և մտածողության զարգացման: Նախ ձևավորվում է առարկայական գործունեությունը, որը նպաստում է երեխայի զարգացմանը: Առարկայական գործունեության զարգացումն ընթանում է ընդօրինակման եղանակով և պայմանավորված է մեծահասակների հետ խոսքային հաղորդակցմամբ: Ընդօրինակումն ըստ Տ.Ի Գորբատենկոյի վաղ տարիքի երեխաների զարգացման ինքնուրույնության դրդող հիմնական մեխանիզմն է: Առարկայական գործունեությունը հիմք է հանդիսանում նաև խաղային գործունեության ձևավորման համար:

Խաղային գործունեության տարրերը սկսում են դրսևորվել երեխայի առարկայա-խաղային ակտիվության պայմաններում, երբ ինքնուրույն առարկայական գործողությունների արդյունքում առարկաների նկատմամբ առաջանում է խաղային վերաբերմունք:

Ձևավորված առարկայական գործունեությունը խթանում է երեխայի կողմից սեփական ցանկությունները ինքնուրույն գործողություններով բավարարելու գործընթացը, ինչն իր հերթին հիմք է հանդիսանում երեք տարեկանի շեմին կարևոր նորագոյացության ‹‹Ես ինքս ›› գիտակցության զարգացման համար:

Վաղ տարիքին հաջորդում է նախադպրոցական տարիքը, որը բաժանվում է կրտսեր, միջին, ավագ նախադպրոցական շրջանների:

Կրտսեր նախադպրոցական տարիք (2-4)

Այս տարիքի երեխայի զարգացումն ընթանում է ինքնուրույնության հաստատման ուղղությամբ: Առաջատար է խաղային գործունեությունը, որը նպաստում է աշխարհճանաչմանը և հասակակակիցների հետ հարաբերությունների ձևավորմանը:

Միջին նախադպրոցական տարիք (4-5)

Այս տարիքում երեխայի զարգացմանը նպաստում է հիշողության և երևակայության զարգացումը: Զգալի փոփոխությունների է ենթարկվում հուզական ոլորտը: Վիգոտսկին նշում էր, որ հինգ տարեկանի շեմին տեղի է ունենում զգացմունքների իմաստավորում (ինտելեկտուալիզացիա) և երեխան ընդունակ է

դառնում բացատրելու սեփական ապրումները, հասկանալու դիմացինի հուզական վիճակն ու զգացմունքները:

Ավագ նախադպրոցական տարիք

Այս տարիքում երեխայի զարգացումը պայմանավորված է կամածին բնույթի գործընթացներով, որոնք նպաստում են երեխայի գործունեության և վարքագծի կարգավորմանը, նաև մտածված գործողությունների և կարգավորում են երեխայի վարքը: Ավագ նախադպրոցականը փորձում է ծրագրել սեփական գործողությունները՝ համապատասխանեցնելով դրանք ներքին ցանկություններին և պահանջմունքներին: Այս տարիքի երեխաների վարքագիծը կառավարելի է: Ընդլայնվում է նաև իմացական հետաքրքրությունները, զարգանում են ստեղծագործական ընդունակություններ, ձևավորվում են տրամաբանական մեխանիզմներ:

1.2 Աշխատանքը, որպես նախադպրոցականի ինքնուրույնության դրսևորման ձև, տեսակները և կազմակերպման ձևերը

Աշխատանքային գործունեություն

Դաստիարակը պետք է իմանա, որ առանց հատուկ պայմանների ստեղծման, առանց խաղերի ու պարապմունքների կազմակերպման անհնար է ինքնուրույնության զարգացումը: Այդ իսկ պատճառով երեխաների մեջ պետք է զարգացնել հետաքրքրություն խաղերի նկամամբ, դաստիարակել դրական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ և այն ավարտին հասցնելու կարողություն ձևավորել: Երեխաների մեջ պետք է զարգացնել աշխատանքի համար կարևոր նախադրյալներ՝ ինքնուրույնություն, նպատակասլացություն, շարժումների վստահություն, ակտիվություն:

Աշխատանքը բնական պահանջմունք է, գոյատևման ձև:

Աշխատանքը հանրագիտարանում սահմանվում է որպես մարդուն բնորոշ նպատակաուղղված գործունեություն՝ ուղղված սեփական կարիքների և պահանջմունքների բավարարմանը: Այն իբրև մարդկային կարևորագույն գործունեություն ձևավորվում է նախադպրոցական տարիքում: Երեխան սիրում է աշխատել և փորձում է ինքնահաստատվել ինքնուրույն աշխատանքային գործունեության միջոցով: Աշխատանքային գործունեության մեջ սիստեմատիկ մասնակցությունը բարձրացնում է երեխաների ընդհանուր զարգացումը, հավատ է ներշնչում իրենց ուժերի նկատմամբ: Երեխաների մոտ ի հայտ են գալիս համագործակցելու ձևեր՝ օգնություն հասակակցին և փոխօգնություն, մասնակցություն մեծերի աշխատանքին: Աշխատանքի ընթացքում կատարելագործվում են երեխաների ունակություններն ու կարողությունները, զարգանում է դիտողականությունը, ընդարձակվում հետաքրքրությունների շրջանակը, ձևավորվում բարոյական հատկություններ՝ աշխարասիրություն, պատասխանատվություն:

Երեխայի աշխատանքը չի ստեղծում նյութական բարիք, այն կարող է լինել նաև անարդյունք, բայց ունի դաստիարակչական նշանակություն: Աշխատանքի միջոցով նա համագործակցում է մեծերի հետ և ձեռք է բերում հմտություններ:

Այս տարիքում (նախադպրոցական) երեխայի աշխատանքային գործունեությանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- Աշխատանքը չի ստեղծում նյութական արժեքներ
- Աշխատանքի խաղային բնույթը
- Աշխատանքի իրադրային և ոչ պարտադիր բնույթը
- Աշխատանքային հմտությունների ընդհանուր բնույթը
- Աշխատանքի արդյունքի պայմանավորվածությունը մեծահասակների օգնությամբ
- Աշխատանքային գործունեության դրդապատճառների տարերային բնույթը:

Աշխատանքի նպատակն ու արդյունքը

Նպատակը արտացոլում է աշխատանքի արդյունքին հասնելու ուղին: Նպատակը բխում է ակնկալվող արդյունքից և ուղղված է դրան: Երեխային օգնում է դաստիարակը, նա է հուշում աշխատանքի նպատակն ու արդյունքը: Հաջորդ մասն են կազմում աշխատանքային գործունեության նպատակին ծառայող՝ աշխատանքային գործունեությունները, որոնց ձևավորման ընթացքում երեխան ինքնուրույն է: Աշխատանքային գործունեությունները յուրացվում են մեծահասակներին ընդօրինակելու ճանապարհով:

Գործունեության ընթացքը

Այն աստիճանաբար բարդանում է՝ երեխայի անձնային և խառնվածքային առանձնահատկություններով:

Աշխատանքային գործունեությունը ավարտվում է աշխատանքի արդյունքով: Երեխային (կրտսեր նախադպրոցական) հետաքրքրում է ոչ թե նյութական արդյունքը, այլ բարոյականը՝ մեծահասակի դրական գնահատականը: Ավագ նախադպրոցականները կարևորում է նյութական արդյունքը, մեծահասակի գնահատականը դառնում է երկրորդական:

Համոզվեցինք, որ աշխատանքային գործունեության ձևավորման տրամաբանությունը ուղղված է աշխատելու ցանկության և կարողությունների զարգացմանը,

աշխատանքի հանդեպ մտածված և պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը:

Աշխատանքային դաստիարակությունը կարևոր գործընթաց է՝ ուղղված աշխատանքի հանդեպ գիտակցված վերաբերմունքի և աշխատանքի արդյունքը գնահատելու կարողության ձևավորմանը:

Նախադպրոցականի աշխատանքի տեսակներն ու կազմակերպման ձևերը

Աշխատանքը իր բովանդակությամբ նախադպրոցական տարիքում լինում է հինգ տեսակ.

- Ինքնասպասարկում
- Կենցաղային տնտեսական աշխատանք
- Աշխատանք բնության գրկում
- Ձեռքի և գեղարվեստական աշխատանք
- Ուսումնական կամ մտավոր աշխատանք

Ինքնասպասարկում – ձևավորվում է վաղ տարիքում՝ սեփական մարմինը սպասարկելու անհրաժեշտությունից: Օրինակ՝ հանվելու և հագնվելու, սպասքից օգտվելու, հիգիենիկ արարողությունից: Այս գործողությունները գնալով բարդանում են երեխայի զարգացման հետ: Ինքնասպասարկման ընդունակ երեխան ձգտում է ինքնուրույնության և դրսևորում է նախաձեռնություն նաև գործունեության այլ ձևերում:

Կենցաղային տնտեսական աշխատանք – ձևավորվում է մեծահասակներին հետևելով և ընդօրինակելով: Այս աշխատանքի կարողությունները ձեռք են բերվում մեծահասակների օգնությամբ և երեխաներից պահանջում են համառ ջանքեր: Պարապմունքի նյութերի նախապատրաստում երեխաների օգնությամբ (մատիտի տուփի հանում, դասավորում և այլն):

Երեխայի աշխատանք բնության գրկում – այս աշխատանքը հնարավորություն է տալիս երեխային հետևելու աշխատանքի արդյունքին՝ օրինակ ծաղիկը ջրում է՝ տեսնելով արդյունքը: Այս աշխատանքը երկարատև է և պահանջում է պատասխանատու հետևողական վերաբերմունք: Արդյունքում երեխան ճանաչում

է բնության գեղեցկությունը՝ հոգ է տանում շան մասին, տեսնում է, թե ինչպես է մեծանում:

Ձեռքի և գեղարվեստական ստեղծագործական աշխատանք

Այս աշխատանքը զարգացնում է դաստակի և մատների մանր մկանները, ուժեղացնում է ուղեղի աշխատանքը, աչքերը, միտքը:

Գեղարվեստական աշխատանքը ավելի ինքնուրույն և երևակայական է, այն ներկայացվում է երկու ուղղություններով

- ✓ Երեխաները պատրաստում են ինքնաշեն իրեր, խաղալիքներ, զարդեր
- ✓ Սովորում են զարդարել խմբասենյակը,դահլիճը, միջանցքը:

Մտավոր աշխատանք ուսումնական բնույթ ունի, այն կազմակերպվում է նոր բան հայտնագործելու նպատակով՝ մտավոր ջանքերի գործադրմամբ (զույգ թվերի ճանաչում):

Աշխատանքի բոլոր տեսակներում մեծահասակի ակտիվ մասնակցությունն է անհրաժեշտ՝ ճիշտ կազմակերպելու համար:

Աշխատանքի կազմակերպման պարզ տարբերակը հանձնարարությունն է : Այն անհատական է, հետո խմբային: Կազմակերպվում են նաև հերթապահություններ, որը բարդ գործընթաց է՝ պարտականություն է բոլորի հանդեպ: Այն նպաստում է աշխատանքային պարտականությունների գիտակցմանը:

Աշխատանքի կազմակերպման արդյունավետ ձևը երեխաների համատեղ աշխատանքն է, որը միավորում է երեխաներին ընդհանուր նպատակի շուրջ, նպաստում է ընկերական և գործնական հարաբերությունների ձևավորմանը, միասին նպատակին հասնելու պատրաստակամությանը:

ԳԼՈՒԽ 2.

Աշխատանքային դաստիարակություն

2.1 **Աշխատանքային դաստիարակություն միջոցները, մեթոդները**

Աշխատանքային դաստիարակության միջոցները երեքն են՝

- ✓ Երեխայի ինքնուրույն աշխատանքային գործունեությունը
- ✓ Ծանոթացումը մեծահասակի աշխատանքի, մասնագիտությունների հետ
- ✓ Գեղարվեստական միջոցները

Այսօր աշխատանքային դաստիարակության գործընթացում կարևոր է ինքնուրույն աշխատանքային գործունեությունը, մյուս միջոցները նպաստում են երեխայի ինքնուրույն գործունեության ձևավորմանը: Ինքնուրույն աշխատանքային գործունեությունների միջոցով ձևավորվում են աշխատանքային կարողություններ և հմտություններ, զարգանում է նպատակաուղղված աշխատելու ունակությունը, բավարարվում է երեխայի մեծահասակների կյանքին մասնակից լինելու պահանջմունքը:

Երեխաներին մեծահասակի աշխատանքի հետ ծանոթացումն իրականացվում է երկու ձևով՝ տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների աշխատանքին ծանոթացնելու մարդկային գործունեության մասին գիտելիքների փոխանցման և երեխաների պատկերացումների ընդլայման ճանապարհով: Երեխաների ուշադրությունը պիտի կենտրոնացնել աշխատանքային գործունեության ատեղծագործական բնույթի վրա:

Գեղարվեստական միջոցներն են՝

- ✓ Մանկական գեղարվեստական գրականությունը
- ✓ Երաժշտությունը
- ✓ Կերպարվեստը
- ✓ Թատրոնը

Աշխատանքային դաստիարակություն մեթոդները

- ✓ Աշխատանքային գործունեությունների ուսուցման մեթոդների ցուցադրումը

- ✓ Բացատրությունները
- ✓ Աշխատանքի ընթացքի և արդյունքի նախնական քննարկման մեթոդը
- ✓ Աշխատանքի ընթացքի և արդյունքի գնահատման մեթոդները
- ✓ Աշխատանքի գործունեության մոդելի կառուցման մեթոդը

Աշխատանքային գործունեության արդյունավետությունը կախված է աշխատելու ցանկությունից, տրամադրությունից: Աշխատանքի գրագետ կազմակերպումը, պայմանների ապահովումը խրախուսում է աշխատելու ցանկություն և պատրաստակամություն: Ձևավորված աշխատանքային գործունեությունը դրական է ազդում երեխայի զարգացմանը, հուզական և իմացական ոլորտի բարոյական և կամային հատկությունների ձևավորմանը, ինքնահաստատմանը:

2.2 Ստեղծագործական ունակություններ

Ստեղծագործականությունը սահմանվում է որպես անձի ընդունակություն ծնելու նոր մտքեր տարբեր ոլորտներում, որոնց շնորհիվ խնդիրները արդյունավետ կլուծվեն:

Ն.Լեյտեսը նշում էր, որ ստեղծագործականությունը հզոր գործոն է անձի զարգացման գործընթացում, որով բնութագրվում է տվյալ անձի պատրաստակամությունը փոխելու, հրաժարվելու, կարծրատիպերից, ազդելու շրջակա իրականության վրա:

Ստեղծագործական ընդունակությունը անձի բնածին հատկությունն է, որը անհրաժեշտ է զարգացնել վաղ տարիքից:

Ստեղծագործականությունը Ե.Տունինն մեկնաբանել է որպես ընդունակություն, որը կախված է մի շարք գործոններից՝

- ✓ Մտքի սահունություն
- ✓ Մտքի ճկունություն
- ✓ Մտքի յուրօրինակություն
- ✓ Մտքի մշակվածություն

Ստեղծագործականությունը երեխայի ներքին ակտիվությունն է, այն կապված է հետաքրքրությունների, մտածողության առանձնահատկությունների հետ:

Դաստիարակի կարևոր խնդիրներից է երեխայի ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Ինքնուրույնության, ստեղծագործականության և նախաձեռնողականությանը նպաստելու համար պետք է հնարավորություն տալ երեխային ինքնուրույն մտածել, արտահայտել սեփական տեսակետը: Դաստիարակը պետք է ձգտի, որ երեխան կատարի ինքնուրույն աշխատանքը և ստեղծագործական առաջադրանքը: Կարևոր է դաստիարակի խրախուսելու և երեխային սխալվելու իրավունք վերապահելու մարտավարությունը, որը բերում է երեխայի ստեղծագործ մտքի անկաշկանդ արտահայտմանը:

Ստեղծագործական ունակությունների զարգացմանը նպաստում է խաղը և այն միջավայրը, ուր երեխան դրսևորվում է որպես ինքնուրույն անձ:

Դիտակտիկ խաղերը նպաստում են երեխայի ինքնահաստատմանը, ինքնադրսևորմանը, ձևավորվում է կամային որակներ: Խաղերն ունեն դաստիարակչական և ուսուցողական նշանակություն: Դերային խաղերը զարգացնում են երեխայի խոսքը, ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունը, խմբով խաղալու հմտությունը՝ բացահայտում ընդունակու-թյունները: Նպատակն է այնպես անել, որ երեխաները ինքնադրսևորվեն ինքնուրույն և ստեղծագործաբար, ու այդ ամենը նրանց հաճույք պատճառի:

Դաստիարակի խնդիրն է ձևավորել կազմակերպվելու ունակություն՝ նպաստել մտածելու փոխօգնության, համագործակցության զարգացմանը: Սովորեցնել կատարել հանձնարարություններ, ձևավորել համագործակցելու եղանակներ՝ դաստիարակի օգնությամբ պայմանավորվել խաղերի և աշխատանքի բաժանման, միմյանց օգնելու, առաջադրանքը ավարտելու համար:

2.3 Նախաձեռնողականության ձևավորում

Նախաձեռնողականությանը այն աժն է, որը նոր միտք է մղում դեպի իրական կյանք: Այն կարողություն է իմանալու ինչպես հաղթահարել դժվարությունները, և մեկ հարթության վրա է բերում տարբեր մարդկանց միավորելով նրանց մեկ նպատակի շուրջ: Գրեթե անհնար է ինչ–որ բան մենակ նախաձեռնել: Այդ սկզբունքը անհնարներին դրդում է իրենց հարցերի պատասխանները գտնել այլ անձանց շնորհիվ:

Երեխան ինքն է նախաձեռնում, թե ինչպես իրականացնի իր մտածածը թեմայի վերաբերյալ, նրա նախաձեռնած միտքը պետք է լինի ընդունելի և դաստիարակին, և՛ իր ընկերներին

3 Պարապմունքի պլան

ԾԲ –ԻՇԱ

Թեմա՝ ‹‹Աշխատանք››

Ինտեգրված՝ խոսքի զարգացում ‹‹Թթու դրիք››

Խումբ ‹‹Ավագ››

Տևողությունը – 35 րոպե

Նպատակ՝ **1.** Երեխաները կկարողանան ամրապնդել ստացած գիտելիքները բանջարեղենների մասին՝ աշխատանքի միջոցով, կդերսևորեն ինքնուրույնություն, ստեղծագործականություն, նախաձեռնողականություն

2. Տեսական գիտելիքների հիման վրա կկարողանա հմտություններ և կարողություններ ձեռք բերել

3. Կկարողանան գտնել միջառարկայական կապերը:

Խնդիրները՝ **1.** Զարգացնել հաղորդակցվելու կարողությունը

2. Սովորեցնել հասկանալ կատարված աշխատանքի նշանակությունը

3. Ձևավորել համագործակցելու կարողությունը, ստեղծագործական միտքը:

Վերջնարդյունքները՝ **1.** Ցուցաբերի հետաքրքրություն աշխատանքի նկատմամբ

2. Նախաձեռնի խոսակցություն մեծահասակների հետ, ուղղի համապատասխան հարցեր՝ տեղեկություններ ստանալու նպատակով

3. Կանխատեսի գործողությունների ընթացքը և ավարտը

4. Արտահայտի իր կարծիքը դրսևորելով քննադատական վերաբերմունք

5. Համեմատի առարկաները ընտ հատկանիշների՝ կտրման միջոցով:

Կապը չափորոշչի հետ՝ ԽԶ Շ(ա) (զ) Շ (ժ.գ) դրսևորում է ընկերասիրություն, աշխատասիրություն, կամք, վճռականություն ՄՏՊ

Մեթոդները – Աշխատանք՝ անհատական և խմբային

Խթանում –Սեղանին դրված են զամբյուղով լի բանջարեղենները, տարրայով ջուրը, աղը, մաղադանոսն ու սխտորը, վարունգն ու ծաղկակաղամբը:

Դաստիարակը հարցնում է, թե ինչե՞ր կան զամբյուղում: Երեխաների պատասխանը լսելուց հետո հարցնում է՝ ըստ իրենց, ի՞նչու և ի՞նչ նպատակով են բերվել այդ ամենը և ի՞նչ կարելի է պատրաստել: Պատասխանելուց հետո պլանավորվում է գործընթացը բոլորի մասնակցությամբ:

Իմաստի ընկալում – Միասին (երեխաների հետ) լվացվում է բանջարեղենները՝ սկսվում է պատրաստման գործընթացը: Հանձնարարություն է տրվում և բացատրվում պատրաստման ընթացքը (կտրել լոլիկը, առանձնացնել իրարից ծաղկակաղամբը, կտրատել մաղադանոսն ու սխտորը): Երեխաներն անցնում են աշխատանքի՝ դաստիարակի և օգնականի մասնակցությամբ՝ պահպանելով սանիտարահիգիենիկ նորմերը: Ընթացքում հարց ու պատասխանի միջոցով (որտե՞ղ են աճում բանջարեղենները՝ հողի վրա, հողի տակ)հարցնել էլ ի՞նչ կարելի է պատրաստել բացի թթուն, ի՞նչ օգտակար հատկություններ ունեն բանջարեղենները և այլն:

Ֆիզկուլտդադար – Մեր ձեռքերն են աջ և ձախ՝ աշխատանքից չունեն վախ, չէ որ բոլորը գիտեն ով աշխատի նա կուտի:

Կշռադատում – Հարցեր ուղղված երեխաներին

-Դուր եկավ արդյո՞ք իրենց կատարած աշխատանքը :

-Կցանկանա՞ն նորից պատրաստել:

-Նաև կարող են պատմել թթու դրիքի քայլերի հաջորդականությունը:



Երգ - ‹‹Եկեք ծեծենք սոխ ու սխտոր››

4 Դիտարկողների վերլուծություն

Դիտարկող՝ տնօրեն Ա.Ամիրջանյան

- Պարապմունքը հագեցած էր համապատասխսն դիդակտիկ նյութերով: Երեխաների ոգևորությունը անսահման էր: Դաստիարակի մտահղացման արդյունքում սաներին բաշխվել էր դերեր՝ այգեպաններ, խոհարար: Վարպետության դասին հնչում էին համահունչ երգեր: Ֆիզկուլտդադարը տեղին էր՝ թեմային վերաբերվող (աշխատասեր ձեռքերը): Դաստիարակը օգտագործում էր հարուստ բառապաշար, որը տեղին էր և ճիշտ: Ընդգրկված էին բոլոր երեխաները, նրանք ոգևորված էին իրենց կատարած աշխատանքից: Ականատես եղանք ստացված պարապմունքի և ստացանք մեծ բավականություն:

Դիտարկող՝ մեթոդիստ Ռ.Շախկյան

- Պարապմունքը հագեցած էր երգով, մտավարժանքով, դաստիարակի դերը շատ ճիշտ էր, նա ուղղորդում էր, իսկ երեխաները խոսքի և հաղորդակցման միջոցով կատարում և հասկանում էին իրենց աշխատանքը՝ նաև արտահայտելով իրենց կարծիքն ու տարբեր մտահոգություններ: Պարապմունքը ծառայեց իր նպատակին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անձի ինքնուրույնությունը, ստեղծագործականությունը և նախաձեռնողականությունը կարևորագույն հատկանիշներից է, նրանց ձևավորումը սկսվում է վաղ տարիքից: Այս ամենի աճի և զարգացման համար մեծ դեր է հատկացվում աշխատանքային գործունեությանը, աշխատանքի մկատմամբ հետաքրքրության ձևավորման, ազատ և անկաշկանդ մտքի արտահայտմանը: Այս ամենը նոր ուժ է, որը նոր միտք է մղում դեպի կյանք:

Հետազոտական աշխատանքի թեմայից ելնելով անցկացրի պարապմունք՝ ընտրելով ‹‹Աշխատանքային դաստիարակություն››՝ ‹‹Թթու դրիք›› թեման: Երեխաները մեծ ոգևորությամբ կատարեցին իրենց հանձնարարված աշխատանքները:

Այսպիսով, կատարելով հետազոտական աշխատանքը եկա այն եզրահանգման, որ աշխատանքը, աշխատելը կարևոր են յուրաքանչյուր մարդու կյանքում: Այն բնական պահանջմունք է, կարևոր գործունեություն, որը կատարելագործում է երեխաների ունակություններն ու կարողությունները, զարգացնում դիտողականությունը:

Ուրեմն ապրեք աշխատելով և սիրեք աշխատել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախաշավիղ» (Լալա Սմբատյան) :
2. Մանկապարտեզի երեխաների դաստիարակություն Երևան 1978:
3. «Նախադպրոցական կրթություն (ուսումնական ձեռնարկ) Մուրադյան, Դալլաքյան էջ 78: